



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2019 թվականի թիվ 8-Ա

ք. Երևան

#### «ՇԱՐԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՑԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմում-բողոքի հիման վրա 2019 թվականի հունվարի 10-ին հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2019 թվականի հունվարի 10-ին Հանձնաժողով մուտքագրված «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմում-բողոքում նշված է «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից խախտում կատարելու փաստի վերաբերյալ: Ըստ դիմողի՝ Ընկերության կողմից «5-րդ ալիք» հեռուստաընկերության եթերում սույն թվականի հունվարի 1-ին ցուցադրվել է «Պատահական ամուսին» («Accidental husband» ԱՄՆ 2008թ.) ֆիլմը՝ առանց իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման, իսկ նշված ֆիլմի ցուցադրման բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է Իրավատիրոջը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 2019 թվականի հունվարի 14-ի թիվ 01-19 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումը, իսկ Իրավատերը 2019 թվականի հունվարի 24-ի դիմումով հայտնել է, որ հրաժարվում է իր դիմումից և 2019 թվականի հունվարի 10-ին հարուցված վարչական վարույթը շարունակելու անհրաժեշտություն չկա:

Ելնելով վերոգրյալից, դիմողի կողմից գրավոր ձևով իր դիմումից հրաժարվելու հիմքով դիմում-բողոքի հիման վրա Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և հիմք ընդունելով Իրավատիրոջ 2019 թվականի հունվարի 24-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***.

1. Կարճել «ՇԱԲԿ» ՍՊ ընկերության նկատմամբ 2019 թվականի հունվարի 10-ին հարուցված թիվ 1 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

11 փետրվարի 2019թ.  
ք. Երևան